Focus Group Survey Analysis
Faculty of Mathematics and Mechanics
MA Study Programme “Financial Mathematics”
Participation - 6 Students

Initial Ideas and Information about the Study Programme

Մասնագիտության ընտրությունը ուսանողները կատարել են անձնական նախընտրություններից ելնելով՝ *«որովհետև չէի ուզում, որ մենակ մաթեմատիկայի մեջ խորանայի, ոչ էլ ուզում էի ուղղակի տնտեսագիտություն»*: Բուհի ընտրությունը հիմնավորվել է նրանով, որ այլ համալսարանները չեն պատրաստում նման որակավորմամբ մասնագետներ, իսկ մասնագիտության մասին իմացել են ինչպես ոչ ֆորմալ աղբյուրներից՝ օրինակ բարձր կուրսեցիների հետ զրույցներից, այնպես էլ ԵՊՀ ուսումնական ձեռնարկներից օգտվելու միջոցով: Մագիստրոսական ծրագրի ընտրությունը պայմանավորված է եղել աշխատաշուկայի պահանջարկով՝ *«...աշխատում էի նենց տեղ, որ պետք էր ավելի խորը գիտելիք...»*, ինչպես նաև տվյալ մագիստրոսական ծրագրի ընտրությունը պայմանավորել են այնպիսի հանգամանքներ՝ ինչպես բակալավրից հետո անվճար սովորելու հնարավորությունն է: Կրթական ծրագրի մասին ունենցած նախնական պատկերացումները մինչև ընդունվելը և ընդունվելուց հետո ուսանողների մոտ մեծամասամբ չեն փոխվել:

Students' Satisfaction with the Study Programme

Ուսանողները նշում են, որ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում սովորելու արդյունավետությունը կախված է առաջին հերթին հենց ուսանողից: Որպես կրթական ծրագրի առավելություններ ուսանողները թվարկում են իրենց ստացած գիտելիքների խորքային լինելը՝ *«մեզ միանգամից արդյունքը չի տրվել այլ բավականին մանրամասն հասցվել ա դրան, որ մենք ավելի լավ պատկերացնենք»*, առավելությունների շարքից է եղել նաև այն, որ դասախոսների մեծամասնությունը ոլորտի պրակտիկ աշխատողներ են և վերջիններիս հետ ուսանողները ունեն հեշտ հաղորդակցվելու հնարավորություն: Իսկ որպես կրթական ծրագրի թերություն նշվեց միայն, որ իրենց դասավանդվող որոշ թեմաներ կրկնվում են մի քանի առարկաներում: Ընդհանուր առմամբ բավարարվածությունը կրթական ծրագրից բարձր է, ուսանողները նշում են, որ՝ *«չկա նենց տեսական գիտելիք, որ ես չգիտեյի ու իմացել եմ աշխատանքի ընթացքում, ցանկացած բան, որ եղել ա աշխատանքի վայրում՝ եղել ա ստեղ տվածի կիրառումը»:* Որոշակի անհարմարություն ուսանողներին պատճառում է որոշ առարկաներից ստացվող գերծանրաբեռնվածությունը՝ *«իրականում շատ բան իմանալը վատ չի, ուղակի էդ ծանրաբեռնվածության հետ մեկտեղ ... մի քիչ ավելի շատ ենք խորացել ու ավել ծանրաբեռնվել, քան իրականում մեզ պետք ա որպես մասնագետ աշխատելու համար»*:

Ընդհանրացնելով ուսանողները նշեցին, որ իրենց առարկայական ծրագրերը անընդհատ թարմացվում են և համահունչ են ժամանակի ընթացքին, ասելով, որ՝ *«դա ամբիոնից էլ ա կախված, կոնկրետ մեր դեպքում՝ ամբիոնի վարիչից ա կախված: Ինքը շատ արագ ա արձագանքում էդ ամեն ինչին, ինքը քննարկում ա մեր հետ ուզում ենք անցնենք թե չէ»,* ասելով, որ իրենց չեն զրկում ոլորտի նորարարություններին ծանոթանալու հնարավորությունից:

Individual Work/Self Study

Մագիստրոսական թեզի կատարումը ուսանողները համարում են մասնագիտական կայացման տեսանկյունից ոչ արդյունավետ՝ *«առանց էդ թղթաբանության կարայինք ավելի մեծ արդյունքի հասնենք...»,* ուսանողների կարծիքով ավելի արդյունավետ կլիներ մագիստրոսական թեզը փոխարինել որևէ կիրառական պրոյեկտի կատարմամբ. սակայն ուսանողները նշում են նաև մագիստրոսական թեզ գրելու դրական կողմը՝ խորացված հետազոտություն իրականացնելը, թեկույզ և միայն մեկ թեմայի շրջանակներում: Անհարմարություն է պատճառում նաև մագիստրոսական թեզերի համար ֆիքսված ծավալը՝ ուսանողների կարծիքով 20 էջ գրելը չափազանց շատ է իրենց մասնագիտության համար՝ *«մեր մոտ կարա մի բանաձևը արդեն սենսացիա լինի իրանով, ու արդեն ոչ մի բան պետք չլինի էդ էջից ավել գրելու»*:

Գիտական ղեկավարների հետ աշխատանքը ուսանողները գնահատում են արդյունավետ և օգտակար, ասելով որ, գիտական ղեկավարների հետ շփումը շատ մատչելի է և հեշտ է տրվում՝ *«ցանկացած պահին հանդիպելով, եթե հարմար ա, նույնիսկ զանգելով, գրելով՝ էլեկրոնային տարբերակով՝ ամեն ձևով, որ պահին ոնց հարմար ա»*: Մագիստրոսական թեզերի համար անհրաժեշտ գրականությունը ևս ուսանողները մեծամասամբ ստանում են իրենց գիտական ղեկավարներից՝ էլեկտրոնային տարբերակով:

Պլագիարիզմի և ինքնուրույն աշխատանքների գնման դեպքերի ուսանողները չեն հանդիպել:

Professional Work-Placement/Practice

Ուսանողները նշեցին, որ մագիստրատուրայում նախատեսված պրակտիկան դեռ չի մեկնարկել, իսկ բակալավրի երրորդ կուրսում անցկացվող պրակտիկայի ընթացքում իրենց 90%-ը արդեն աշխատում էին ֆինանսական կազմակերպություններում և, համապատասխանաբար՝ պրակտիկան անցկացրել են յուրաքանչյուրն իր աշխատանքի վայրում: Քննարկման ընթացքում ուսանողները հավելեցին նաև, որ կցանկանային՝ *«պրակտիկային ավելի հետևողական լիներ համալսարանը, թե ում ա ուղարկում ու ոնց ա էդ կազմակերպությունը անցկացնում պրակտիկան»*: Նշվեց նաև, որ պրակտիկայի ղեկավարները չեն հետևում դրա ընթացքին, ինչի հետևանքով ուղղորդված կազմակերպություններում ուսանողները չեն կարողանում ստանալ իրենց ոլորտի համար կիրառական փորձ:

Teaching Staff and Teaching Methods

Որպես իրենց դասախոսների հիմնական առավելություն ուսանողները նշեցին, որ վերջիններիս մեծամասնությունը ոչ միայն դասավանդում, այլ նաև ոլորտի պրակտիկ մասնագետներ են հադիսանում: Նշվեց նաև, որ դասախոսները բացի պրակտիկ և տեսական գիտելիքներից պետք է ունենան նաև մանկավարժական որակներ և *«բացատրելու ունակություն»*: Որպես լավագույն դասախոսներ ուսանողները թվարկեցի Պողոսյան Միքայելի, Մարտիրոսյան Միհերի և Վարդումյան Էդմոնի անունները: Նշեցին նաև, որ կան այնպիսի մասնագետներ, որոնք *«իրենց դարն ապրել են բայց ստեղ են»,* սակայն հրաժարվեցին նրանց անունները թվարկել՝ *«ասելը կապ չունի, եթե իրանք դեռ հիմա ստեղ են ու իրանց չեն տեսել, ինձ թվում ա անունը ասելուց հետո էլ ոչ մի բան չի փոխվելու»:*

Կրթական գործընթացի մասին խոսելիս՝ ուսանողները նշեցին, որ իրենց կարծիքով բակալավրի առաջին և երկրորդ կուրսերից հետո գրավոր ընթացիկ քննություններ հանձնելը արդյունավետ չէ, և առաջարկեցին դրանք փոխարինել իրական բազաների հիման վրա կառուցվող պրոյեկտներով:

Ասվեց նաև, որ կրթական ծրագրի ղեկավարը բաց է քննարկումների հանդեպ և հաշվի է առնում ուսանողների կարծիքները կրթական ծրագրերում փոփոխություններ մտցնելու հարցում:

Opinion on Yerevan State University (YSU)

Ուսանողները նշեցին, որ կոնկրետ իրենց ֆակուլտետում սովորելը, ոչ միայն հնարավորություն է տալիս մասնագիտական կայացման համար, այլ նաև զարգացնում է տրամաբանությունը, վերլուծական մտածողությունը և սովորեցնում է սովորել՝ *«...նենց մակարդակի են հասցրել, որ մենք եթե ինչ-որ բան չէինք էլ անցել՝ մենք շատ ավելի հեշտ ենք կարողացել նոր բան ընկալել՝ մենք մենակով, քան, որ նկատել ենք ուրիշ ֆակուլտետներից»*:

Համալսարանի պայմանների հագեցվածության առումով ուսանողներըվ նշեցին, որ կցանկանան լայնացնել և թարմացնել տեխնոլոգիական հնարավորությունները, ավելացնել համակարգչային լսարանների քանակը և համակարգիչներում ապահովել լիցենզավորված մասնագիտական ծրագրերի առկայությունը: Շարունակելով հագեցվածության հարցը ուսանողները ասացին նաև, որ ոմանք դեռևս չունեն գրադարանի քարտ, բայց դրա կարիքը չեն զգացել, քանի որ ԵՊՀ գրադարանում իրենց հետաքրքրող մասնագիտական գրականություն չկա: Հավելեցին նաև, որ ԵՊՀ գրադարանի բացը իրենց համար լրացնում է ֆակուլտետի ընթերցասրահը, որը պարբերաբար թարմացվում է ամբիոնների վարիչների, ասպիրանտների, նախկին և ներկա ուսանողների ուժերով:

Համալսարանական մշակույթի մասին խոսելուց ասվեց, որ մասնակցել են ամառային դպրոցների և գիտական ճամբարների, որոնցից մասամբ են բավարարված:

Կրթական գործընթացների որակի բարձրացման համար ուսանողները առաջարկում են ռոտացիոն համակարգը փոխարինել զեխչային համակարգով, որտեղ ուսանողները կստանան կրթաթոշակ իրենց առաջադիմությանը համապատասխան և չեն զրկվի պետպատվերի համակարգում սովորելու հնարավորությունից հարյուրերորդական միավորի պատճառով: Ուսանողները առաջարկում են նաև կրթությունը դարձնել ավելի հետաքրքիր և ինտերակտիվ՝ լեկցիաներ թելադրելու և արտագրելու փոխարեն: